ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Տիգրան Կարենի Սիմոնյանի «Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացված *«Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում»* թեմայով ատենախոսության արդիականությունը, գիտական արժեքն ու պատմաքաղաքական նշանակությունը կասկած չեն հարուցում: Աշխատանքն արդիական է ինչպես Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքական զարգացման տրամաբանության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ անվտանգային գործընթացների վերլուծության դիտանկյունից:

Հայաստանի պարագայում՝ 2015 թվականի Սահմանադրական փոփոխություններով իրականացված անցումը դեպի խորհրդարանական կառավարման մոդել ձևավորեց նոր քաղաքական և ինստիտուցիոնալ իրականություն, որի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է միաժամանակ և՛ ներքին քաղաքական վերափոխումներով, և՛ արտաքին մարտահրավերների խորացմամբ: Խորհրդարանական կառավարման հաստատումն ու դրան հաջորդած գործընթացները տեղի ունեցան տարածաշրջանային և գլոբալ անկայունությունների սրման պայմաններում՝ ներառյալ Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի լարվածությունն ու տարածաշրջանում առաջացած նոր աշխարհաքաղաքական իրողությունները: Ձևավորված նոր իրողություններում Հայաստանի խորհրդարանական կառավարման արդյունավետությունն ու կայունությունը վերածվում են ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոնի:

Ատենախոսության թեման առանձնակի կարևորություն է ստանում այն հանգամանքով, որ այն անդրադառնում է ոչ միայն խորհրդարանական կառավարման տեսական հիմքերին, այլև դրա պրակտիկ իրագործման մարտահրավերներին, որոնք Հայաստանի

դեպքում պայմանավորված են հետպատերազմյան քաղաքական լարվածությամբ, հանրային վստահության տրանսֆորմացմամբ և պետական ինստիտուտների ինստիտուցիոնալ փոփոխություններով:
Հետևաբար, ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ոչ միայն Հայաստանի քաղաքական համակարգի բարելավման և ժողովրդավարական ինստիտուտների կայունացման անհրաժեշտությամբ, այլև տարածաշրջանային անվտանգության նոր ճարտարապետության ձևավորման գործընթացում պետական կառավարման ինստիտուտների դերի գիտական վերլուծության և վերաիմաստավորման հրամայականով: Ներկայացված գիտական աշխատանքն ունի ոչ միայն տեսական, այլ նաև հստակ կիրառական նշանակություն՝ պետական կայունության, ինստիտուցիոնալ արդյունավետության և հանրային քաղաքականության բարելավման համատեքստում:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է փաստել, որ նշյալ ոլորտում գիտահետազոտական ուսումնասիրություններն առավել արդիական են և պետք է արժանանան պատշաճ ուշադրության: Այս տեսանկյունից ատենախոսությունն արժեքավոր է, քանի որ այն կառուցվել է Հայաստանի Հանրապետության քաղաքական և ինստիտուցիոնալ իրականության խորքային վերլուծության վրա, ինչը հնարավորություն է տվել հեղինակին գիտական եզրակացությունները դիտարկել ոչ միայն տեսական, այլև գործնական քաղաքականության ձևավորման հարթությունում՝ բարձրացնելով հետազոտության գիտագործնական նշանակությունը:

Տիգրան Սիմոնյանի աշխատանքում պատշաճ կերպով ներկայացված են թեմայի գիտական մշակվածությունը, սահմանված են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները: Ատենախոսությունն աչքի է ընկնում տրամաբանական շղթայի պահպանմամբ և հետևողականությամբ, փաստական բազայի գրագետ ներկայացմամբ և վերլուծությամբ, եզրակացությունների վավերականությամբ:

Աշխատանքը կառուցված է տեսամեթոդական հարուստ բազայի վրա: Հետազոտական աշխատանքի շրջանակներում հեղինակն օգտագործել է մի շարք մեթոդներ, ինչպիսիք են փաստաթղթերի բովանդակային վերլուծության (content analysis), համեմատական-վերլուծական (comparative-analytical), դեպքի ուսումնասիրության (case study), ինստիտուցիոնալ (institutional analysis) և տեսական մոդելավորման ու ինտեգրատիվ վերլուծության (theoretical modelling and integrative analysis) մեթոդները: Կիրառված մեթոդաբանական համալիրն ապահովել է համապարփակ, միջդիսցիպլինար և բազմամակարդակ վերլուծություն՝ նպաստելով ատենախոսության գիտական նպատակների իրականացմանը և ազգային անվտանգությանն առնչվող հիմնահարցերի խորքային ուսումնասիրմանը:

Ատենախոսության մեջ ձևակերպված հետևությունները, ընդհանրացումներն ու եզրակացությունները, ինչպես նաև ներկայացված գործնական առաջարկությունները

փաստարկված են, աչքի են ընկնում տրամաբանական հետևողականությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Դրանք արդիական են և կարող են հանդես գալ որպես համակարգված և համակողմանի հիմնավորված քաղաքագիտական մոտեցում:

Դրանցից կարևորում ենք հետևյալները.

- Զարգացող ժողովրդավարական երկրներում խորհրդարանական համակարգի ներդրումը կարող է ստեղծել գործադիր և օրենսդիր իշխանությունների միավորման վտանգ՝ խաթարելով իշխանությունների տարանջատման սկզբունքը:

- Հայաստանում 2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո խորհրդարանական կառավարման մոդելին անցումը հանդիսացավ կարևորագույն ինստիտուցիոնալ փոփոխություն՝ ուղղված ժողովրդավարական կառավարման ամրապնդմանը, սակայն այս գործընթացը տեղի ունեցավ անվտանգային մարտահրավերների պայմաններում, ինչն անմիջական ազդեցություն ունեցավ խորհրդարանական համակարգի զարգացման վրա:

- Հայաստանում խորհրդարանական վերահսկողությունը ազգային անվտանգության ոլորտում դեռևս լիովին զարգացած չէ, հատկապես թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիական վերահսկողության առումով, ուստի անվտանգային տեսանկյունից օրենսդիր մարմնի ազդեցությունը ամրապնդելու համար անհրաժեշտ են համապարփակ կառուցվածքային բարեփոխումներ և ընթացակարգային նոր մոտեցումներ:

- Անվտանգային մարտահրավերները կարող են ծառայել որպես ինստիտուցիոնալ նորարարությունների խթանիչ՝ նպատակելով պառլամենտի ռազմավարական բարեփոխումներին, միջխորհրդարանական դիվանագիտությանը և հասարակության մասնակցությունը, ինչն ամրապնդում է ժողովրդավարության դիմադրողականությունը աշխարհաքաղաքականապես խոցելի միջավայրում:

Պետք է նշել, որ ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ատենախոսի ընդունակությունն ու հմտությունները լիովին բացահայտվել են հատկապես տեսական և մեթոդաբանական սկզբունքների համադրության ճանապարհով քննարկվող հիմնահարցերի սահմանների ճշգրտման և դրա հիման վրա հետազոտական նպատակների ու խնդիրների հստակ սահմանման տեսքով:

Ատենախոսության **առաջին գլխում՝** «*Խորհրդարանական կառավարումը որպես համեմատական քաղաքագիտության օբյեկտ*», հեղինակը իրականացրել է խորհրդարանական կառավարման տեսամեթոդաբանական հիմնահարցերի ուսումնասիրություն՝ ընդգրկելով արդյունավետության չափանիշները և առկա մարտահրավերները, կատարել օրենսդրական գործընթացների բարդությունների և

արտախորհրդարանական գործառույթների համապարփակ վերլուծություն, դիտարկել խորհրդարանական համակարգերի պատմական զարգացումը Հին Հունաստանից և Հռոմեական Սենատից մինչև անգլիական և ֆրանսիական հեղափոխությունների կառուցվածքային ազդեցությունները, ինչպես նաև կատարել է ժամանակակից խորհրդարանական մոդելների և իշխանությունների տարանջատման սկզբունքի համալիր վերլուծություն:

Երկրորդ գլխում՝ *«Խորհրդարանի դերը ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում»,* հեղինակն իրականացրել է Հայաստանի խորհրդարանական կառավարման անցումային գործընթացի վերլուծություն, ուսումնասիրվել է անվտանգային սպառնալիքների՝ մասնավորապես տարածաշրջանային հակամարտությունների և աշխարհաքաղաքական ճնշումների ազդեցությունը խորհրդարանական գործընթացների վրա, գնահատվել է խորհրդարանի արդյունավետությունը ճգնաժամային կառավարման պայմաններում, ներառյալ COVID-19 համավարակը և 2020 թվականի պատերազմը, վերլուծվել է ինստիտուցիոնալ լեգիտիմության և հանրային վստահության դինամիկան ճգնաժամային իրավիճակներում:

Աշխատանքի **երրորդ գլխում՝** *«Խորհրդարանական կառավարման դերն ու նշանակությունը ազգային անվտանգային կայուն զարգացման և ապահովման գործում»,* հեղինակն իրականացրել է Հայաստանի, Իսրայելի և Վրաստանի խորհրդարանական համակարգերի համեմատական վերլուծություն, ընդգծել ինստիտուտների հասունության և հարմարվողականության կարևորությունը ճգնաժամերին արդյունավետ դիմակայելու գործում, առանձնացրել ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման և ոչ ֆորմալ քաղաքական ցանցերի հաղթահարման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացրել ռազմավարություններ խորհրդարանական դիմադրողականության բարձրացման ուղղությամբ՝ հիմնված համեմատական վերլուծության արդյունքների վրա:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ լեզվով և համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Ատենախոսության եզրահանգումներն ու հիմնադրույթները հայեցկարգային են, աշխատանքը աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների ներկայացման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ:

Այնուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ թերություններից և բացթողումներից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները՝

1. Ատենախոսը աշխատանքի գիտական մշակվածության բաժինը /էջ 5-7/ ներկայացրել է առավել ընդհանրական: Հեղինակը չի նշում այն առանցքային հետազոտություններն ու ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են ոլորտի առաջատար մասնագետների և գիտնականների կողմից՝ պարզաբանելով

հեղինակների մոտեցումներն ու դիտարկումներն հետազոտվող խնդրի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ հեղինակը կիրառել է հարուստ գրականության և մեթոդաբանական աղբյուրների լայն ընտրություն, ցանկալի կլիներ, որ գիտական մշակվածության բաժինը առավել համակարգված և համապարփակ կերպով անդրադառնար թեմային առնչվող նախորդ հետազոտություններին, մանրամասն ներկայացներ հիմնական առանցքային աշխատանքները, բացահայտեր դրանց մեթոդաբանական և տեսական առաջնահերթությունները և ընդգծեր դրանցից քաղվող գիտական հետևություններն ու ազդեցությունը հետազոտվող թեմայի վրա, ինչը կբարձրացներ աշխատանքի տեսական հիմնավորվածությունը և ուսումնասիրության նորարարական արժեքը:

2. Աշխատանքում նկատելի են կառուցվածքային անհամապատասխանություններ: Մասնավորապես, ատենախոսության առաջին գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Structural and functional features of parliamentary governance» («Խորհրդարանական կառավարման կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները»), անդրադառնում է խորհրդարանական կառավարման համակարգի կայացման պատմական հիմքերին՝ հիմնական շեշտադրումն ուղղելով բացառապես պատմական իրողությունների ներկայացմանը, այլ ոչ նշված կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունների վերլուծությանը: Այս դեպքում ցանկալի կլիներ, որ ենթագլխի բովանդակությունը հստակ արտացոլեր վերնագրի տրամաբանությունն ու նպատակադրումը, կամ, հակառակը, ենթագլուխը վերաձևակերպվեր այնպես, որ լիովին համահունչ լիներ ներկայացված բովանդակությանը: Խորհրդարանական կառավարման կառուցվածքային և գործառնական առանձնահատկություններին հեղինակը մասնակիորեն անդրադառնում է հաջորդ՝ «National security functions of parliamentary governance» («Խորհրդարանական կառավարման ազգային անվտանգության գործառույթները») ենթագլխում, որտեղ հեղինակը նշված երրորդ ենթագլխի իր առջև դրված խնդրին՝ այն է խորհրդարանական կառավարման ազգային անվտանգության գործառույթների վերլուծությանը անդրադառնում է ենթագլխի վերջին երեք էջերում /էջ 37-40/:

3. Հեղինակը որպես աշխատանքի եզրակացության առանցքային դրույթ և գիտական նորույթ ընդգծում է, որ գործող խորհրդարանական կառավարման համակարգը պետք է դիտարկել ոչ միայն որպես կառավարման մոդելի կառուցվածքային փոփոխություն, այլև՝ անկախության հռչակագրի արժեքային և գաղափարական հիմքերի համատեքստում: Միաժամանակ, չնայած աշխատանքում առկա են բազմաթիվ պատմական էքսկուրսներ և փաստական տվյալների մեջբերումներ, հեղինակը չի անդրադառնում հայկական պառլամենտարիզմի ակունքներին: Ավելին, ատենախոսության երրորդ գլխի առաջին ենթագլուխը, վերնագրված "The

formation of the parliament of the Republic of Armenia and the peculiarities of its functions in the context of the functions of public authorities" («ՀՀ խորհրդարանի կազմավորումը և նրա գործունեության առանձնահատկությունները հանրային իշխանության մարմինների գործունեության համատեքստում»), իր դիտարկումները սկսում է 1920թ. Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ձևավորման ժամանակաշրջանից, մինչդեռ գիտականորեն առավել ամբողջական կլիներ, եթե հեղինակն ուսումնասիրեր Հայաստանի Առաջին Հանրապետության փորձը, որն առանձնանում էր ժողովրդավարական կառավարման ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման և անվտանգային որոշումների կայացման առանձնահատկություններով: Այս շրջանի ուսումնասիրությունը, հատկապես որպես հայկական պառլամենտարական ավանդույթի սկզբնաղբյուր, կարող էր էականորեն խորացնել հետազոտության տեսական և համեմատական հենքը՝ բարձրացնելով աշխատանքի գիտական արժեքն ու վերլուծական ամբողջականությունը:

4. Ատենախոսության 76–78, ինչպես նաև 80–91 էջերում բացակայում եմ հղումները, չնայած ներկայացված են մի շարք փաստական տվյալներ, հղումներ իրավական ակտերին:

5. Ատենախոսության եզրակացության բաժնում՝ «Խորհրդարանական կառավարման համատեքստում հիմնական եզրահանգումներ» հատվածի ներքո /էջ 93/ հեղինակը ներկայացնում է մի շարք դիտարկումներ, ըստ որոնց՝ քաղաքական իրավունքները, մասնավորապես կառավարման գործընթացներին մասնակցելու իրավունքը, դիտարկվում են որպես հիմնարար երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս անհատներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ազդել օրենսդրական գործընթացների վրա և ամրապնդել պետական ինստիտուտների լեգիտիմությունը/ էջ 94, կետ 5/: Բացի այդ, հաջորդ 6-րդ կետում նշվում է, որ այդ իրավունքների արդյունավետ իրագործումն ունի առանձնահատուկ նշանակություն իրավական պետության ժողովրդավարական համակարգում, որտեղ ամուր խորհրդարանական համակարգերն ու նպաստող օրենսդրական դաշտը ապահովում են քաղաքացիների լայն մասնակցություն և քաղաքական ազատությունների ինստիտուցիոնալ երաշխիքներ / էջ 94, կետ 6/: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ ներկայացված ձևակերպումները արտահայտում են ճշմարտություններ, որոնք ինքնին չեն պահանջում լրացուցիչ գիտական ապացուցում կամ խորքային վերլուծություն, եթե միայն հեղինակը չի նպատակադրում վերջիններիս հաղորդել նոր մեկնաբանություն կամ վերաիմաստավորել տեսական նոր մոտեցման շրջանակում:

Այնուամենայնիվ, վերը նշված թերություններն չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով այս հանգամանքը գտնում եմ, որ Տիգրան Կարենի Սիմոնյանի «Խորհրդարանական կառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքագիտության
ամբիոնի ասիստենտ, քաղաքական
գիտությունների թեկնածու՝ Կ.Գ. Խոջայան

Քաղաքական գիտությունների թեկնածու Կ. Խոջայանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Մ.Վ. Հովհաննիսյան

ք. Երևան

22.10.2025թ.